ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«30» նոյեմբերի 2022թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 14-րդ, 18-րդ և 19-րդ կետերը, և Խորհրդի նախագահի 2022 թվականի նոյեմբերի 29-ի N 5-Լ որոշումը՝ Խորհրդի հերթական նիստը որոշվեց անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2022 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 13^{00}-ին և ավարտվեց՝ ժամը 15^{00}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Վ. Դումանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Ռ. Գևորգյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Մ. Թադևոսյան - «Մասնակցային դպրոց» կրթական ծրագրի հիմնադրամի անդամ

Ա. Բախշյան - «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյան - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

Քվեարկությանը չի մասնակցել

Ա. Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հակոբյան - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2023 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

2. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

3. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի գործունեության 2023 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

Օրակարգային հարցի քվեարկության համար անհրաժեշտ նյութերն ուղարկվեցին Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացավ:

Քվեարկության արդյունքում՝

1. Վ. Դումանյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
2. Ա. Դանիելյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
3. Ռ. Գևորգյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
4. Ա. Հայրապետյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
5. Մ. Թադևոսյան 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
6. Բ. Փափազյանը 11-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
7. Ա. Բախշյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 7 «կողմ»:
Հարց 2-րդ՝ 7 «կողմ»:
Հարց 3-րդ՝ 7 «կողմ»:

Այսպիսով, տեսչական մարմնի Խորհրդի հեռակա նիստին մասնակցած 7 անդամներից 7-ը օրակարգի հարցին քվեարկեցին «կողմ»:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2023 թվականի տարեկան ծրագիրը:
2. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:
3. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի գործունեության 2023 թվականի տարեկան ծրագիրը:

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Խորհրդի նախագահ՝ Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

_____ **Վ. Դումանյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն